

ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

CHURCH HISTORY

ИСТОРИЯ ЦЕРКВИ

ՆԱԲԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան

ՀԱՅՈՑ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ Կանոնագիրք Հայոց, Հովհան Թանգի, Մխիթար Գոշ, Հակոբ Ամասիացի, Կանոն, հիշատակարան, վկայություն:

Հայոց կանոնական ժողովածուն ձևավորվել է աստիճանաբար: Կազմավորվելով 5-րդ դարում՝ Հայոց Կանոնագիրքը հարյուրամյակների ընթացքում պարբերաբար խմբագրվել է, հարստացել նորանոր կանոնախմբերով և մեզ հասել բազմաթիվ խմբագրություններով:

«Կանոնք», «Կանոնգիրք», «Կանոնագիրք», «Գիրք կանոնաց» և նմանատիպ այլ անվանումներով պահպանվել են հարյուրավոր ձեռագիր մատյաններ:

¹ Այն, որ Հայոց կանոնական ժողովածուն ձևավորվել է կիրառվել է 5-րդ դարում, համակարծիք են գրեթե բոլոր ուսումնասիրողները, սակայն նրանցից յուրաքանչյուրը յուրովի է պատկերացնում այդ ժողովածուի առաջացումն ու ընդգրկման սահմանները. տե՛ս **Յ. Տաշեան**, Վարդապետություն առաքելոց անվանական կանոնաց մատենան: Թուղթ Յակոբայ առ Կողարտոս եւ Կանոնք Թադեի, Քննություն եւ բնագիրք, «Յաւելուած», Վիեննա, 1896, էջ 427-442, նաև՝ **Ն. Ակիմեան**, Շահապիվանի ժողովին կանոնները, Բնագիր եւ քննություն, «Յաւելուած», Բ տպագրություն, Վիեննա, 1950, էջ 61-66 (Հ. Տաշեանի և Ն. Ակիմեանի սույն աշխատություններում տպագրված են Հ. Գաբրելյանի՝ Հայոց Կանոնագրին նվիրված դեռևս անտիպ երկից որոշ հատվածներ), **Յ. Տաշեան**, նշվ. աշխ., էջ 186, 204, **Ս. Տիգրանյան**, Հայոց իրավունքի պատմության ներածություն (մեքենագրված, ձեռագրի իրավունքով), Յերեվան, 1923, էջ 100-114, **Ռ. Վարդանյան**, Հայոց Տոնացույցը (4-18-րդ դարեր), Երևան, 1999, էջ 58-61, **Նույնի**՝ Հայոց տոմարական եղանակը. թարգմանական բնագրերի ժամանակը, Երևան, 1993, էջ 36-37, Համաբարբառ Կանոնագիրք Հայոց, կազմ. **Ա. Մարտիրոսեան**, «Ներածություն», Ս. Էջմիածին, 2020, էջ 26, 28, **A. Mardirossian**, *Le livre des canons arméniens (Kanonagirk' hayoc') de Yovhannēs Awjneg'i. Église, droit et société en Arménie du IV^e au VIII^e siècle*, Lovanii, 2004, p. 41-43, 496, 501. **M. E. Shirinian, G. Muradyan, A. Topchyan**, *The Armenian version of the Greek ecclesiastical canons*, Löwenklau-Gesellschaft e. V. Frankfurt Main, 2010, p. 21-42.

րում ընդօրինակված, կառուցվածքով և բովանդակությամբ միմյանց նման կամ միմյանցից էապես տարբերվող մեծաթիվ ժողովածուներ: 20-րդ դարում Ս. Տիգրանյանի², Ն. Ակիմյանի³ և Վ. Հակոբյանի⁴ համակողմանի ուսումնասիրությունների շնորհիվ գրչագիր այս ժողովածուները դասդասվել են մի քանի ձեռագրամբերի:

Սույն հոդվածում, շանդրադառնալով այդ ձեռագրամբերից յուրաքանչ-յուրի առանձնահատկություններին, նմանություններին ու տարբերություններին, քննության կառնենք առհասարակ Հայոց կանոնական ժողովածուին վերաբերող վկայությունները: Խնարհե, նման ծավալուն նյութը մեկ հոդվածի սահմաններում մատուցել հնարավոր չէ, ուստի պարզապես ընդհանուր գծերով կներկայացնենք, թե մեր մատենագիրներն ու գրիչներն ինչպես են ընկալել Հայոց Կանոնագիրքը, ինչպես են պատկերացրել դրա ձևավորումն ու հետագա զարգացումը և ինչպես են բնութագրել այն իրենց երկերում ու հիշատակարաններում:

Այսպես, Մխիթար Գոշը (1120?-1213) Դատաստանագրքի Նախադրության մեջ փոքրիկ պարբերությամբ ուրվագծում է կանոնական ժողովածուների առաջացման ու հետագա զարգացման համառոտ պատմությունը. «... ոչ միանգամ եղաւ կանոնք, եւ ոչ ի միում ժամանակի, եւ ոչ ի միոջէ, այլ առ սակաւ, եւ ի բազում ժամանակս, եւ ի բազմաց: Զի նախ՝ առաքելականն եղաւ, եւ ապա՝ ի նիկիայ, եւ նախ քան զնա՝ այլք, եւ ապա՝ յայլսն ժողով, եւ ի զանազան ժամանակս, եւ ի բազում հարց»⁵:

Միջնադարյան Հայաստանի մեծանուն իրավագետը համոզված է, որ Դատաստանագիրքն էլ Կանոնագրքի նման հետզհետե ընդլայնվելու է. «Այսպէ՛ս ի դէպ է լինել գրոցս դատաստանի: Զի այժմ սկիզբն սորա եղեւ եւ առ սակաւ սակաւ ի դէպ աճել ի զանազան ժամանակս եւ այլ եւս կարգել ի բազմաց, եւ այսպէս գալ ի կատարումն ամենատես գիտութեամբ»⁶: Բազմաթիվ նուրբ և ուշագրավ զուգահեռներ անցկացնելով Կանոնագրքի և իր կազմած նորաստեղծ ժո-

² С. Тигранян, Древне-армянская книга канонов, Очерки описания и исследования памятника, I Описательная часть, Записки Российской академии наук по историко-филологическому отделению, том XIII, № 3, Петроград, 1918, նաև Ս. Տիգրանյան, նշվ. աշխ.:

³ Ն. Ակիմեան, Թուղթ Մակարայ Բ. երուսաղէմի Հայրապետի առ Վրթանէս եպիսկոպոսապետ Սիւնեաց Յաղագս կարգաց եկեղեցւոյ, Վիեննա, 1930 թ., նույնի՝ Շահապիվանի ժողովին կանոնները:

⁴ Կանոնագիրք Հայոց, աշխ. Վ. Հակոբյանի, «Ներածություն», հ. Ա, Երևան, 1964, էջ VII-LXXIX, հ. Բ, Երևան, 1971, էջ VII-CXXII:

⁵ Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, աշխ. Խ. Թորոսյանի, Երևան, 1975, էջ 23:

⁶ Նույն տեղում:

ղովածուի միջև՝ Մխիթար Գոշն ընդգծում է, որ դրանք փոխկապակցված են և լրացնում են միմյանց. «...եւ թէպէտ բաժանեալք ի միմեանց են, սակայն ի բազում իրս միաւորին, որպէս ոգի եւ մարմին. բնութեամբ՝ երկու եւ անշփոթ խառնմամբ՝ մի, բազում անգամ ի միասին վարին մի կամաւք: Վասն այսորիկ, թէպէտ պատահի միով սահմանաւ վարիլ, ոչ միմեանց լուծիլ են»⁷:

Հայոց Կանոնագրքի՝ մեզ հասած վաղագույն ընդօրինակության՝ Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի թիվ 131 ձեռագրի (1098 թ.) հիշատակարանի հեղինակն էլ նշում է, թե ովքեր են ստեղծել ու հաստատել կանոնները, և ովքեր ունեն նման իրավասութիւն: Հետեւելով ավանդությանը՝ նա շեշտում է, որ առաջին կանոնները և եկեղեցու քրիստոսավանդ կարգերը սահմանել են առաքյալները. «սուրբ առաքեալքն (այս և հետագա ընդգծումները մերն են — Ն. Վ.) աշակերտեալք ի Փրկչէն, ըյնկալեալք զՀոգին Սուրբ մեծաշ[ա]ռ[ալ] իջմամբ ի սուրբ վերնատանն եւ լուսաւորեալք լեզուաւքն հրեղէնաւք եւ եղեալ խորհրդագէտք եւ խորհրդածուք աստուածային պարգեւացն եւ գիտացեալ Հոգւովն, թե գալոց են գայլք յափշտակողք, եւ թե քակեսցին ոմանք ի հաւատոց..., ի սուրբ վերնատանն դնեն կանոնս եւ յարինեն կարգս քրիստոսաւանդս ընդհանրական եկեղեցւոյ»⁸: Ապա հեղինակը հավելում է, որ հետագայում, երբ «սկզբնաշար բանսարկուն», այսինքն՝ սատանան, կռամով թագաւորների և շարափառ հերձվածողների միջոցով փորձել է խախտել, քայքայել եկեղեցու կարգերը, այդժամ աստվածասեր և բարեպաշտ թագաւորները, եկեղեցու հայրերն ու հայրապետները «բարերար եւ մարդասէր» Տիրոջ ուղղորդությամբ սուրբ ժողովներում ի լրումն առաքելական կանոնների հաստատել են նոր կանոններ. «Իսկ բարերար եւ մարդասէր Տէրն մեր եւ Փրկիչն ի ձեռն աստուածասէր եւ բարեպաշտ թագաւորաց եւ հոգիագումար միաբանելոց հարց եւ հայրապետաց յիրաքանչիւր ժամանակս ըստ պատահման չարին ի ձեռն սուրբ սինհոդոսաց կտրէ ի բաց զչարսն չարութեամբն հանդերձ եւ ըստ պատահման ի[րին յաւ]րինեն կանոնս զգուշաւորս ի լրումն առաքելականին, զայս աւանդ առեալ՝ հարքն մեր հաւաքեցին ի մի զաստուածապարզեւ աւանդս, զկարգս եւ զկրանս եկեղեցւոյ հասուցին առ մեզ»⁹: Ահա այս կանոններն են, որ մեր հայրերը համախմբել և ավանդել են մեզ: ՄՄ 3368 (1639 թ.) ձեռագրի գրիչն էլ, համառոտ թվարկելով Կանոնագր-

⁷ Նույն տեղում, էջ 5-6:

⁸ ՄՄ Դրսի լուսանկարների հավաքածու Հ^{մբ}. 203 (Նոր Զուղա 131), 319ա (ըստ լուսանկարչական պատկերի): Հայերեն ձեռագրերի Ե-ԺԲ դդ. հիշատակարանների հավաքածուում գրչագրի հիշատակարանի այս և ստորև մեջբերվող հատվածը բացակայում է (տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե.-ԺԲ. դդ., աշխ. Ա. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 117-119):

⁹ ՄՄ Դրսի լուսանկարների հավաքածու Հ^{մբ}. 203 (Նոր Զուղա 131), 319աբ (ըստ լուսանկարչական պատկերի):

քում ընդգրկված կանոնախմբերը, նշում է, որ դրանք «մեծաւ աշխատութեամբ» ի մի տփի են ժողովել իմաստունները, և կարեւորում կանոնների համարների ու ցանկերի առկայությունը, ինչը դյուրացնում է Կանոնագրքի գործածումը. «Արդ, շնորհիւ (sic !) Տեառն սկսայ եւ ողորմութեամբ նորին աւարտեցայ զսահմանեալ տառս Կանոնաց առաքելոցն եւ երից սուրբ ժողովոյն, սուրբ հարանցն հպատակաց եւ ընդ ժամանակս սուրբ եպիսկոպոսաց եւ թագաւորք ժողով եղելոցն ամենայն ազգաց եւ մանաւանդ՝ յատուկ մերայնոց ազգացս հայրապետաց, եպիսկոպոսաց եւ սրբոց վարդապետացն, զոր ժողովեալ են իմաստունքն սուրբ մեծաւ աշխատութեամբ եւ եղեալ են ի մի տուփ եւ ցանկով փակեալ եւ համարով նշանակեալ, զի դիրագիւտ լիցի խնդրողացն վաղվաղակի գտանել վկայական բանիւք բազմաւք մին կանոնին...» (թ. 265բ):

Գրչի մատնանշած ցանկերը «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի բոլոր ենթախմբերի ձեռագրերում առկա ընդհանուր առարկայական ցանկերն են, որտեղ նշվում է Կանոնագրքում արծածված որևէ խնդիր և այդ խնդրին առնչվող կանոնների ընդհանուր համարները: Հատկանշական է, որ Կանոնագիրք ձեռագրերի յուրաքանչյուր ենթախումբն ունի առարկայական իր ցանկը. օր.՝ Վ. Հակոբյանի աշխատասիրությունում հրատարակված «Կանոնագիրք Հայոց»-ի առարկայական ցանկը ՄՁԸ. (288) միավորով¹⁰ հանդիպում է միայն ձեռագրերի Ա խմբի այս ենթախմբին հարող գրչագրերում¹¹: Առարկայական ցանկերից ամենաընդարձակը ՄՄ 10682 (1643 թ.), 2677 (1697 թ.) և 10953 (Ժէ. դ.) թվահամարի ձեռագրերում պահպանված տարբերակն է՝ «Յրուացանկ է սրբոց կանոնացս» խորագրով, ՅԹ. (309) միավորով¹²: Այն 1643 թ.-ին կազմել է Ներսես

¹⁰ Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 5-17:

¹¹ Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի այս ենթախումբը բաղկացած է Ծէ. (57) կանոնախմբից (ԺԱ. դարի կեսից մինչև 1098 թ. իրականացված խմբագրություն), մինչդեռ առարկայական ցանկում ընդգրկված են միայն ԽԱ. (41) կանոնախմբերի (մինչև ԺԱ. դարի կեսն իրականացված խմբագրություն) կանոնների ընդհանուր համարները. տե՛ս ՄՄ 3148 (Ժէ. դ.), թ. 1ա-Ցա, հմմտ. Նոր Զուղա 131 (ՄՄ Գրսի լուսանկարների հավաքածու չմ. 203), 7ա-17բ (լուսանկարչական պատկերներ): Նշենք, որ Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի թիվ 131 ձեռագրի առարկայական ցանկում հետագայում ավելացվել են նաև Խէ.-Ծ. (47-50) կանոնախմբերի կանոնների ընդհանուր համարները, և Վ. Հակոբյանը հրատարակել է այս ձեռագրի առարկայական ցանկը հետագա հավելումներով հանդերձ: Նշված խմբագրությունների և այստեղ առկա առարկայական ցանկերի մասին առավել մանրամասն տե՛ս Ն. Վարդանյան, «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի խմբագրությունները (Ը. դարի երկրորդ կես – ԺԱ. դարի երկրորդ կես)», էջմիածին, 2016, ե., էջ 54-63:

¹² ՄՄ 10682, 14ա-35բ, ՄՄ 2677, 3բ-19ա, ՄՄ 10953, 4ա-9բ: Կանոնագիրք ձեռագրերի այս ենթախմբում իրականացված փոփոխությունների և վերը հիշատակված առարկայական ցանկի մասին առավել մանրամասն տե՛ս Ն. Վարդանյան, «Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի՝ XIV դարից հետո մինչև XVII դարի վերջն իրականացված սրբագրումներն ու խմբա-

վարդապետն իր աշակերտներին՝ Հակոբ և Ալեքսան կուսակրոն քահանաների, հաշատուր սարկավագի և ՄՄ 10682 ձեռագրի գրիչ Հովհաննես դպրի հետ: Այս մասին վկայում է գրչագրի հիշատակարանը. «Եւ յիշեցէք յաղաւթս ձեր զմեղ-սամած եւ զանարժան ներսէսս՝ աշակերտեալ մանկամբս հանդերձ, այսինքն՝ զՅակոբն եւ զԱլեքսան բանի սպասաւոր քահանայքն կուսակրան եւ զհաշատուր սարկաւագն բանասէր եւ զՅովհաննէս հոգեւոր որդեակս, որ գրեաց զմատենաս: Եւ ունին վերոյ գրեալ աշակերտքս, որ առ միաւք բազում աշխատանս ի վերա ցանկի սորա, զի կարի եղծեալ էր ի ծերութենէ աւրինակ սորա...»¹³:

Հայոց Կանոնագրքի ձեւավորման և առանձին կանոնախմբերի ուսումնասիրման համար կարևորագույն տեղեկություններ է պարունակում Հովհան Օձնեցի (717-728) կաթողիկոսի «Խաւաք Յոհանու հայոց կաթողիկոսի՝ ի գիտութիւն պատուիրանացն Տեառն, զոր սուրբ հարքն եղին» (այսուհետ՝ «Ի գիտութիւն պատուիրանացն Տեառն...») երկը¹⁴: Խիստ հետաքրքրական այս ճառում Հովհան Օձնեցին խոսում է իր ժամանակը հուզող խնդիրների մասին, պաշտպանում և հիմնավորում Հայոց եկեղեցում ընդունված կարգերը տարբեր կանոնախմբերից քաղված կանոններով¹⁵ բազմիցս շեշտելով դրանց առաքելահաստատ, եկեղեցու հայրերի կողմից ավանդված լինելը:

«Ի գիտութիւն պատուիրանացն Տեառն...» երկում Իմաստասեր կաթողիկոսը հայտնում է, որ շատերը թերահավատորեն են վերաբերում եկեղեցական կանոններին. «Զի ոմանք վարկանել կամեցան զկանոնադիր պատուիրանս եւ այլք ասացին, թէ առաջին վարդապետքն ըստ կամաց իւրեանց ի ծանրութիւն յաւելին եւ կէսք անուղղայ խորհելով, թէ մեք որպէս զնոսա իշխանութիւն ունիմք»¹⁶: Ի հակադրություն այս «անգիտութեան»՝ Հովհան Օձնեցին պատասխանում է, որ առաքյալները, եկեղեցու հայրերն ու վարդապետները կանոնները. «...ոչ ըստ կամաց իւրեանց, այլ ըստ Աստուծոյ ազգմանն սահմանեցին վասն իրիք իրիք պիտոյից...»¹⁷, և պարզաբանում է, թե ինչպես և ինչու են հաստատվել այդ կանոնները: Եկեղեցու հայրերն ու վարդապետները ոչ թե փոփոխել են մինչ այդ ստեղծված կանոնները, այլ ընդամենը լրացրել և վերահաստատել են դրանք: Այս կերպ են վարվել և՛ Գրիգոր Լուսավորիչը (302-325 թթ.), ով «զկնի այնորիկ

գրումները», Պատմություն եւ հասարակագիտություն տարեգիրք (Գիտական հոգվածների ժողովածու), Երևան, 2016, 2, էջ 152-164:

¹³ ՄՄ 10682, 381բ:

¹⁴ ՄՀ, հ. է, Ը. դար (Յաւելում), Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 148-155:

¹⁵ Այս բնագրում հետինակը վկայակոչում և կանոնական մեջբերումներ է կատարում Կանոնաւառաքելական, Կղեմեսի, Գանգրայի, Գրիգոր Լուսավորչի, Հովհան Մանդակունու և այլ կանոնախմբերից:

¹⁶ Յովհան Աւձնեցի, Ի գիտութիւն պատուիրանացն Տեառն..., էջ 148:

¹⁷ Նոյն տեղում:

ոչ կամեցաւ լուծանել, այլ ի սուրբ կանոնսն յաւելոյր»¹⁸, և՛ մյուս վարդապետները, ովքեր «... ըստ հանդիպման ժամանակին յաւելուլ կամեցան յեկեղեցական կարգս, նախ զառաջի եղեալսն ի սրբոց առաքելոցն հաստատէին եւ ոչ քակտէին, ընդ նմին եւ զերանելի նահապետացն, որ զնոսայն նախագրեալ էին, ապա վերագրեալ ըստ պիտոյից պիտոյից եւ ոչ զեղեալ կանոնս նոցա ընդունել եղծանէին, որպէս այժմ ի բազմաց տեսանել...»¹⁹: Կաթողիկոսը կոչ է անում չփոխել ընդունված կանոնները, «զի գեղեցիկ են եկեղեցական սահմանք, զոր հարցն մերոց Հոգւովն Սրբով են հաստատեալ»²⁰:

Հատկանշական է, որ երկի այս հատվածում ընդհանուր գծերով լավագույնս ներկայացված է Ընդհանրական եկեղեցում կանոնական ժողովածուների կազմավորման և զարգացման ընթացքը: Կազմավորման նմանատիպ ուղի է անցել նաև Հայոց կանոնական ժողովածուն, որ ձևավորվել է քայլ առ քայլ տարբեր դարերում տարբեր հրամայականներով ստեղծված կանոնախմբերի մեկտեղման և պարբերական խմբագրությունների շնորհիվ:

Այս խմբագրություններից ամենահայտնին կամ ամենից քննարկվածը, անշուշտ, Հովհան Օձնեցու իրականացրած խմբագրությունն է: 20-րդ դարի երկրորդ կեսին Վ. Հակոբյանը, հրատարակելով Հովհան Օձնեցի կաթողիկոսի կազմած կանոնական հավաքածուն և դրա հետագա ընդլայնումը ներկայացնող Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի 25-57 կանոնախմբերը²¹, ժողովածուն պայմանականորեն կոչեց «Կանոնագիրք Հայոց»:

¹⁸ **Յովհան Աձնեցի**, *Ի գիտութիւն պատուիրանացն Տեառն...*, էջ 148: Հեղինակն այստեղ մատնանշում է Արիստակեսի (325-333) բերած Նիկիական կանոններին Գրիգոր Լուսավորչի կողմից նոր կանոններ հավելելու վերաբերյալ պատմական վկայությունը. տե՛ս **Ագաթանգեղոս**, *Պատմութիւն Հայոց*, աշխ. **Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց**, Տփղիս, 1909, էջ 465-466, նաև՝ **Մովսէս Խորենացի**, *Պատմութիւն Հայոց*, աշխ. **Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան**, Տփղիս, 1913, էջ 240-241:

¹⁹ **Յովհան Աձնեցի**, *Ի գիտութիւն պատուիրանացն Տեառն...*, էջ 148:

²⁰ **Նույն տեղում**, էջ 149:

²¹ *Կանոնագիրք Հայոց*, Բ. Ա. Բ: Ամբողջացնելով և զարգացնելով Ս. Տիգրանյանի (տե՛ս նշված աշխ., էջ 137-178) և Ն. Ակիմյանի (տե՛ս **Ն. Ակիմեան**, *Թուղթ Մակարայ Բ. Երուսաղէմի Հայրապետի առ Վրթանէս եպիսկոպոսապետ Սրնեաց...*, էջ 93-103) մինչ այդ առաջադրած տեսակետները՝ Վ. Հակոբյանը համակողմանի ուսումնասիրությունների շնորհիվ հիմնավորում է, որ Հովհան Օձնեցու Կանոնագիրքին ընդգրկել է 24 կանոնախումբ, իսկ դրա կառուցվածային համակարգն ամառադարձի պահպանվել Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբում (տե՛ս *Կանոնագիրք Հայոց*, Բ. Բ, «Ներածություն», էջ VII-XV):

Նույնի՝ «Կրկին Ս. Յովհաննէս Օձնեցի կաթողիկոսի «Կանոնագիրք Հայոց» ժողովածոյի ընդգրկման խնդրի մասին», *Էջմիածին*, 2017, ԺԲ, էջ 62-76, **Նույնի՝** «Հովհաննէս Օձնեցի կաթողիկոսի «Կանոնագիրք Հայոց» ժողովածոյի հեղինակային նախօրինակը և հետագա խմբագրությունները, Սահմանադրական մշակույթի արժեքանական ակունքները հայ ժողովրդի հազարամյա տարեգրության ծալքերում, Ս. Էջմիածին, 2020, էջ 161-203:

«Ի գիտութիւն պատուիրանացն Տեառն...» երկում առկա է ուշագրավ մի վկայութիւն, որը, մեր կարծիքով, լրացնում, հաստատում է Կանոնագրքի խմբագրութեան վերաբերյալ Հովհան Օձնեցու հայտնի հիշատակարանի հաղորդած տեղեկութիւնները²²: Ճառի սկզբում իմաստասեր կաթողիկոսը մտահոգվում է, որ իր օրերում շատերն են հեռացել աստվածային պատվիրաններից և խոտորվել եկեղեցու ճիշտ ուղուց. «... որպէս եւ այժմ բազումք գնան զարտուղի, որոց ստիւք խաւարեալ են եւ ի միտս իւրեանց յիմարեալք: Ինքեանք ընդ կարծեալք անկեալ անջատեցան յաստուածային պատուիրանացն, որ ի ձեռս առաքելոցն եւ մարգարէիցն մեզ պատմեցան, զոր յաճախապատում ի հարցն եւ ի վարդապետացն բացայայտեցաւ, զի մի՛ ոք սայթաքեսցի յաստուածային ճանապարհէն, զոր այժմ ոմանց թիւրեալ գտան յուղիղ ճանապարհէն»²³: Եվ ահա, այս հանգամանքն էլ դրդում է իրեն վերստին կազմել կանոնական ժողովածու, որ վերահաստատվեն խախտված առաքելական կարգերը. «Վասն այսորիկ եւ ես զկանոնական խումբս կամեցայ»²⁴ վերստին նորոգել, զի որ ընթեռնու իմացի ճանաչել զաստուածապաշտութիւն՝ սնամիտք մի՛ լինել յընդունայնաբանութեան, որպէս այժմ բազում երեւին»²⁵:

Ընդգծված հատվածից բնագրի կազմող Հ. Քյոսեյանը եզրակացնում է. «... այս ճառը շարադրուած է հեղինակի ձեռքով կանոնագրքի կազմում-խմբագրումից յետոյ: «Վերստին նորոգել» բառերը ցոյց են տալիս, որ Օձնեցին իր կազմած

Նշենք, որ Հայոց կանոնական ժողովածուի «օձնեցիական» խմբագրության վերաբերյալ նոր վարկած է առաջ փաշել Ա. Հակոբյանը: Վերանայելով և մերժելով նախորդ ուսումնասիրողների տեսակետները՝ Ա. Հակոբյանը կարծում է, որ Հովհան Օձնեցու կազմած կանոնական հավաքածուին ավելի հարագատ է ՄՄ 659 և 657 գրագրերում ներկայացված Կանոնագրքի «մայր» տարբերակը. տե՛ս Ա. Յակոբեան, «Յովհան Օձնեցու նորայայտ տօնացոյցային երկը՝ Նախահաաւումն պատմութեան այսմ բանից՝ Յովհաննու վերձանաւղի», ՀՈ, 2006, թիւ 1-12, սյուն. 91-99, նույնի՝ «Յովհաննէս Օձնեցու «Կանոնագիրք Հայոց» ժողովածոյի խմբագրութիւնների խնդիրը եւ Անանիա Մոկացին», ՀՈ, 2007, թիւ 1-12, սյուն. 213-256, Հավելենք, սակայն, որ Ա. Հակոբյանի՝ Հայոց կանոնական ժողովածուի «օձնեցիական» և հետագա խմբագրությունների վերաբերյալ առաջադրած տեսակետները, մեր կարծիքով, հիմնովին փաստարկված չեն (գոնե նշված աշխատանքներում), երբեմն հիմնված են թեական ենթադրությունների վրա և կարիք ունեն հավելյալ ֆննդության: Ա. Հակոբյանի տեսակետներին առավել մանրամասն կանոնադաւանն «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի Հովհան Օձնեցու խմբագրութեանը նվիրված մեր առաջիկա հոդվածում:

²² Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 535-537:

²³ Յովհան Աձնեցի, Ի գիտութիւն պատուիրանացն Տեառն..., էջ 148:

²⁴ Հրատարակված բնագրում տպագրական սխալի հետևանքով «կամեցայ»-ի փոխարեն տպագրվել է «կազմեցայ», մինչդեռ հրատարակության հիմքում ընկած եղմ. 1303 թվահամարի ձեռագրում հստակ գրված է «կամեցայ»: Շնորհակալություն ենք հայտնում բնագիրը հրատարակության պատրաստած Հ. Քյոսեյանին՝ ձեռագրի համապատասխան թերթերի լուսանկարները մեզ տրամադրելու համար:

²⁵ Յովհան Աձնեցի, Ի գիտութիւն պատուիրանացն Տեառն..., էջ 148:

ժողովածուն վերանայել, վերախմբագրել է՝ առաւելագոյնս պատշաճեցնելով Ազգային եկեղեցու կանոնական պահանջներին»²⁶։ Մենք, սակայն, կարծում ենք, որ «վերստին նորոգել»-ը վերաբերում է ոչ թե Հովհան Օձնեցու կազմած ժողովածուին, այլ մինչ այդ գոյութիւն ունեցող կանոնական հավաքածուին կամ հավաքածուներին։ Այսինքն՝ Հովհան Օձնեցին ոչ թե վերանայել, վերախմբագրել է իր իսկ կազմած ժողովածուն, այլ մինչ այդ կիրառվող կանոնական ժողովածուի կամ ժողովածուների խմբագրման ու վերաձեւման շնորհիվ, այս հավաքածուում կամ հավաքածուներում առկա իրեն հետաքրքրող կանոնախմբերը, որոնք, ըստ Կանոնագրքում պահպանված իր հիշատակարանի՝ «ոմանք առ ոմանս եւ ոչ ամենեքին առ ամենեսեան սերմանեալ» էին, մեկ «գեղեցկագործ»²⁷ մատչանում մեկտեղելով էլ կազմել է «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն։

Հարկ է նշել, որ միջնադարյան գրիչները մեծ զգուշավորութեամբ, կարելի է ասել՝ երկյուղածութեամբ են ընդօրինակել Կանոնագիրք ձեռագրերը։ Մեր ուսումնասիրած 60-ից ավել ձեռագրերում, հատկապես՝ Ա. և Բ ձեռագրախմբերի գրչագրերում²⁸, նկատելի է, որ գրիչները խուսափել են բնագրի ձևափոխութիւններից և կամայական լրացումներից, փորձել են հնարավորինս զաղափար օրինակին հարազատ ընդօրինակութիւն կատարել։ Այդ է պատճառը, որ ձեռագրական յուրաքանչյուր ենթախմբի բնորոշ են նույն տարբերակները, կանոնների մասնավոր և ընդհանուր համարների միևնույն թռիչքներն ու կրկնութիւնները։ Հատկապես ընդհանուր համարների դեպքում երբեմն այնպիսի խառնաշփոթ է տիրում, որ հուսահատ գրիչներն ու հետագա սրբագրողները, անկարող լինելով սխալն ուղղել, թողել են միայն համապատասխան բացատրական նշումներ։

Այսպես՝ ՄՄ 9488 (1621 թ.) ձեռագրի հետագա սրբագրիչը (Ժէ. դ.) խախտված ընդհանուր համարակալումն ուղղելու անօգուտ փորձերից հետո²⁹ բավա-

²⁶ ՄՀ, հ. է, Ը. դար, էջ 18, տողատակ 13։

²⁷ Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 536։

²⁸ Կանոնագիրք ձեռագրերի Ա. և Բ խմբերը Հովհան Խմաստասեր Օձնեցի կաթողիկոսի կազմած ու հետագայում ընդլայնված կանոնական հավաքածուն ներկայացնող հարուստ ձեռագրական նյութի պայմանական բաժանումներն են (տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, «Ներածություն», էջ XXX)։ Ձեռագրական այս երկու խմբերը, հիմնում ունենալով Հովհան Օձնեցու կազմած կանոնական ժողովածուն (24 կանոնախումբ), միմյանցից տարբերվում են ընդգրկած կանոնախմբերի քանակով և հաջորդականությամբ։ Ձեռագրերի Ա խումբը բաղկացած է 57-60 կանոնախմբից. այստեղ Հովհան Օձնեցու 32 կանոններից բաղկացած կանոնախումբը 24-րդ համարի ներքո է։ Այս խմբի 1-57 կանոնախմբերը հրատարակված են Վ. Հակոբյանի կազմած մեծածեփ «Կանոնագիրք Հայոց» երկհատույակում (տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, հ. Բ)։ Կանոնագիրք ձեռագրերի Բ խումբն ընդգրկում է 78-81 կանոնախումբ. այստեղ Հովհան Օձնեցու կանոնախումբը 36-րդը կամ 42-րդն է։

²⁹ Նկատելով, որ Փիլիպպոս առաքյալի կանոնախմբի առաջին կանոնի փոխարեն «Նախաբանն» է համարակալված ԶԿԲ. ընդհանուր հերթական համարով՝ սրբագրիչը ստորին լուսանցիում կատարել է հետևյալ նշումը. «Այս ԶԿԲ. ցանկն ի հոս չիպտի (sic !), այս կից յառաջ

րարվել է միայն ընթերցողներին ուղղված «ՄՎ եղբայր, սեւ գիր համարն (ընդհանուր համարները – Ն.Վ.) ծուռ է գրած» (247բ) նշումով և, որ հետաքրքրական է գրչին ուղղված գանգատով կամ հանդիմանությամբ. «Սեւ գիր համարքն ծուռ է գրած, ո՛վ գրծող» (260ա):

Իսկ ՄՄ 8926 (ԺԵ. դ.) ձեռագրի հետագա սրբագրիչը (ԺԵ. դ.), որ լրացրել է թե՛ կանոնախմբերի բացակայող հերթական կարգահամարները, թե՛ կանոնների ընդհանուր և որոշ մասնավոր համարներ³⁰, թե՛ բնագրի բացակայող հատվածները³¹, կատարել է հետևյալ գրառումը. «Յայսքան տեղիս ոչ ուղիղ գնան համարագիր մեծ ցանկին (ընդհանուր համարները – Ն. Վ.). ԼԴ., ԼԴ., ՃԾԲ., ՃԾԲ., ՃԿԵ., ՃԿԵ., ՄԾԸ., Շ., Շ., ՉԿ., ՊԲ., ՊԲ.» (71բ): Այս նշումով սրբագրիչը հուշում է, որ կանոնների ընդհանուր համարակալումը խախտված է նշված համարների կրկնությունով³² կամ թռիչքով³³, ապա հավելում. «Մի՛ գայրասցիս վասն թիւրու-թեան համարացս գծողիս, բազում աշխատեցայ եւ ոչ եղև հնար ուղղելոյ, քանզի մեծ ցանկն (առարկայական ցանկը – Ն. Վ.) ի վերա այսմ աւելի եւ պակաս համարացս է շինեալ» (72ա):

Ինչպես արդեն նշեցինք, Կանոնագիրք ձեռագրերի յուրաքանչյուր ենթախումբ ունի իր առարկայական ցանկը և կանոնների՝ միայն տվյալ ենթախմբին հատուկ համարակալում՝ մասնավոր և ընդհանուր համարների համապատասխան թռիչքներով և կրկնություններով, որոնք գրիչներն ընդօրինակության ժամանակ չեն փոփոխել, թեև շատ դեպքերում նկատել են այդ անհամապատասխանությունները: Չեն փոփոխել, քանզի իրենց նման իրավասություն չեն վերապահել, որովհետև ինչպես իրենք են վկայում, կանոնները քրիստոնեական հավատի քանոններն են. «Քանոնս հաւատոյ քրիստոնէից»³⁴, «...զի սովաւ ապաշ-

տուր թիւ մի» (245բ), ապա շարունակել. «Ի հոս պիտի ՉԿԲ.-ն» (246ա. երկու նշումներն էլ հետագայում թանաքագծով ջնջվել են): Իսկ հետո փորձել է ուղղել խախտված ընդհանուր համարակալումը, բայց ապարդյուն, քանզի այստեղ ևս առարկայական ցանկին համապատասխանում են նախնական համարները:

³⁰ ՄՄ 8926, 46բ-47բ, 48ա (այստեղ միայն մեկ կարգահամար է գրչից), 137բ և այլն:

³¹ ՄՄ 8926, 189բ խորագիր՝ «Վասն կանոնադրութեան կաթողիկէ եկեղեցւոյ...», 194ա խորագիր՝ «...կաթողիկոսի բան կանոնական...» (ընդգծված հատվածներն ավելացված են հետագայում գրչի կարմիրից տարբերվող առավել մուգ կարմիրով) և այլն:

³² Այստեղ ԼԴ. ընդհանուր համարով են համարակալված թե՛ «Կանոն առաքելական»-ի վերջին ԼԴ. (37ա), թե՛ Կղեմեսի առաջին՝ Ա. (42ա), ՃԿԵ. համարով՝ թե՛ Նիկիայի վերջին Ի. (53բ), թե՛ Անկյուրիայի առաջին՝ Ա. (57ա) կանոնները:

³³ ՄԾԸ. հերթական համարը թռիչք, ՄԾԷ., ՄԾԹ. համարներով համարակալված են Անտիոքի ԺԹ., Ի. կանոնները (72ա): Թադեոս առաքյալին վերագրվող կանոնախմբի վերջին ԼԴ. կանոնը համարակալված չէ. ԼԴ./ՉԾԹ., ԼԴ./չիք, իսկ ՉԿ. ընդհանուր հերթական համարով համարակալված է հաջորդ՝ Փիլիպպոս առաքյալի անվամբ հայտնի կանոնախմբի նախաբանը (154ա):

³⁴ ՄՄ 659 (1368 թ.), 320բ:

խարեն մարդիկը եւ դառնան ի մեղաց իւրեանց եւ լուսաւորեալ արդարանան շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ամէն»³⁵: Քանզի հոգիների այս բժշկարանը, ըստ միջնադարյան գրիչների, ստեղծվել է «ի բժշկութիւն վիրաւորեալ հոգւոց ի պէս-պէս յաղբից բանսարկուին, զի սովաւ սրբեալք ի մեղաց ի ձեռն ապաշխարութեան արժանի լիցին վերստին փրկութեան»³⁶:

Մխիթար Գոշը գրում է. «Կանոնական սահման հոգւոյ է ուղղիչ»³⁷:

Իսկ ՄՄ 658 (1601 թ.) ձեռագրի գրիչը կանոնները կոչում է կյանքի դեղ՝ մեղքերով վիրավորվածների համար, որ ճանապարհ են հարթում դեպի լուսաճեմ կյանք. «Կանոնական սահմանադրութեանցն զլրու (sic !) ուղղաճեմ հաւատոցն, զոր ի Հոգոյն Սրբոյ ընկալեալ հարցն եւ հայրապետացո՞յ յարդարեցին մեզ ճանապարհ կենաց առ լուսաճեմ կեանսն աւթեւանիլ բոլորից մարդկան, կազմեցին դեղ կենաց համարէն վիրաւորելոցս մեղաւք» (272բ):

ՄՄ 7615 (1352 թ.) գրչագրի նախագաղափար հիշատակարանի հեղինակն էլ մի ամբողջ հատված է ձոնում կանոններին՝ դրանք անվանելով աստվածային սպեղանի, հոգիաշնորհ պարգև, մեղքերի ջնջիչ, դժոխքի կողոպտիչ, մարդկային ազգի կեցուցիչ. «Ով կանոնք՝ աստուածային սպեղանի, քրիստոսական դեղ, հոգիաշնորհ պարգև: Ով կանոնք՝ կենդանութեան արմատ, հիւանդաց բժիշկ, գլորելոց նեցուկ, յուսահատելոց վստահութիւն: Ով կանոնք՝ բելիարայ բեկումն, սատանայի սարսուճ, բանսարկուին խոցոտիչ, դիւաց ահարկու, գերելոց դարձուցիչ, մեղաց ջնջիչ, դժոխոց կողոպտիչ, ցնծութեան առիթ, բերկրութեան բղխումն, մարդկան ազգի կեցուցիչ: Ով կանոնք՝ Աստուծոյ Հաւր ծանաւթութիւն, Որդւոյ սիրելութիւն, Հոգւոյն բնակութիւն, առ Աստուած համարձակութիւն, Երրորդութեան մերձակայ, դրախտին ժառանկ, հրեշտակաց դասակից, զուարթնոց քաղաքակից, սերովբէից պարակից, քերովբէից կաճառակից, աթոռոց դրակից, Աստուածութեանն հանգիստ, վասն որոյ երանի ստացողացն զքեզ սիրով: Եւ արդ, պարգեւողին զքեզ մեզ արհնութիւն, գոհութիւն եւ անդադար փառաբանութիւն ընդ Հաւր եւ ընդ Սուրբ Հոգւոյն յաւիտեանս» (261բ-262ա):

Հարկ է նշել նաև, որ նոր և նորագույն շրջանում Կանոնագիրքն ավելի ու ավելի քիչ է գործածվել, և այս մասին ուշագրավ վկայություններ են պահպանվել Հակոբ դպիր Ամասիացու (Գևորգյանի, ԺԸ.-ԺԹ. դդ.) 1800 թ. կազմած քաղվածո Կանոնագրքի առաջաբանում: Այստեղ հեղինակը ցավով նշում է, որ իր օրերում Կանոնագրքի կիրառությունը խիստ սահմանափակվել է, քանզի «հին խորամանկի» (սատանայի — Ն. Վ.) թելադրանքով հոգևորականներն այլևս չեն

³⁵ ՄՄ 837 (1627-1630 pp.), 292ա:

³⁶ ՄՄ 8158 (1635 p.), 336բ:

³⁷ Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, էջ 5:

օգտվում այդ անգին գանձից և «ի գաւառի միում հազիւ հազ գտանի Կանոնագիրք մի, եւ այն ի ծերպս եւ ի ծակս ամրափակեալ, զի մի՛ տեսանիցեն եւ բժշկեսցին ինքեանք եւ իւրեանց ժողովուրդք»³⁸: Այն հանգամանքը, որ «անհմուտ քահանաներն» այլևս չեն գործածում Կանոնագիրքը, հանգեցրել է նրան, որ «եկեղեցին Քրիստոսի՝ իբր անդեկ նաւ ի ձեռն անհմուտ նաւավարի, տատանեալ ծփիլ, մերձ ընկղմիլ»³⁹: Ահա այս «անտանելի աղետ»-ն էլ ստիպում է Հակոբ Ամասիացուն շրջել գավառից գավառ և տարբեր խմբերի ու ենթախմբերի⁴⁰ Կանոնագիրք ձեռագրերի համադրությամբ ստեղծել Կանոնագրքի ուղեցուցային մի օրինակ, որտեղ այբբենական հերթականությամբ կազմված ցանկում հեղինակը ներկայացնում է Կանոնագրքում արծածված խնդիրները և դիմացը նշում տվյալ խնդրին առնչվող կանոնախմբի կամ կանոնախմբերի անվան հապավումն⁴¹ ու կանոնի մասնավոր համարը՝ դյուրացնելով Կանոնագրքի գործածությունը: Իր առաջաբանում Հակոբ Ամասիացին ներկայացնում է երկի ստեղծման հիմնական պատճառներն ու նպատակները. «... սկսաք աշխատասիրել ի շարայարումն այբբենական ցանկի Կանոնգրոց քաղուածօրէն ըստ տկար կարեաց մերոց, եւ այս վասն երից. նախ՝ զի դիւրաւ գտցի խնդրելին, երկրորդ՝ զի ամենից լիցի անձանձրոյթ ըմբռնելի ի միտս համառօտակի իմաստ բանին, եւ երրորդ՝ զի թէ անհնար լիցի ոմանց ստանալ կամ գրել զԿանոնագիրս, զսա միայն ունիցին գրել դիւրապէս եւ միշտ առ ձեռն ունել, զի թերեւս զարթուցեալք սովիմք ի թմբուլթենէ եւ զգաստացեալք՝ ծանիցէ իւրաքանչիւր ոք ըստ աստիճանացն զմատակարարութիւնս, եւ քան զեւս՝ երիցունք զապաշխարութեան սահմանս ըստ յանցանացն, գոնէ զոմանս կարասցեն ապրեցուցանել թերեւս զինքեանս»⁴²:

Ամփոփելով նշենք, որ միջնագարյան հեղինակներն ու գրիչները Հայոց Կանոնագիրքը կոչել են «սուրբ գանձարան», «որ է դեղ եւ սպեղանիք ցաւագնելոց

³⁸ ՄՄ 3100, 1ա, ՄՄ 2936, 1ա:

³⁹ Նույն տեղում:

⁴⁰ Ըստ մեր նախնական ուսումնասիրությունների՝ Հակոբ Ամասիացին օգտվել է ոչ միայն ձեռագրերի Ա և Բ խմբերի տարբեր խմբագրությունների օրինակներից, այլ նաև ՄՄ 651 թվաճամբի ձեռագրին հարող մի Կանոնագրից՝ ճիմնականում առաջնորդվելով Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի Գևորգ Սկևռացու՝ 78 կանոնախմբից բաղկացած խմբագրության տարբերակներով: Հետաքրքրական այս բնագրին առավել մանրամասն կանոնադաշտում մեր առաջիկա աշխատանքներում:

⁴¹ Օգտագործված աղբյուրների (բացի Կանոնագրում ընդգրկված կանոնախմբերից՝ օգտվել է նաև Մխիթար Գոշի Դատաստանագրից) անվանումների համառոտագրումների ցանկը ներկայացրել է երկի սկզբում. ՄՄ 3100, 3բ-4բ:

⁴² ՄՄ 3100, 1բ:

եւ մեղանշելոց»⁴³, «արագ բժիշկս հոգւոց մերոց, մեղաց մերոց լուծիչ»⁴⁴: Իրենց երկերում վկայակոչել են այն, գովերգել, մատնանշել Հայոց կանոնական ժողովածուի առաջացման և ընդլայնման պատճառներն ու նպատակները՝ ընդգծելով այս հավաքածուի անքակտելի կապը համաքրիստոնեական կանոնական ժողովածուների հետ:

NARINE VARDANYAN

THE ARMENIAN CANONICAL COLLECTION IN LITERARY SOURCES AND COLOPHONS

Key words: Armenian canonical collection, Hovhan Odznets‘i, Mkhit‘ar Gosh, Hakob Amasiats‘i, canon, colophon, testimony.

The Armenian canonical collection was formed in stages. Being composed in the 5th century, the *Armenian Book of Canons* was continually edited and gradually expanded in the following centuries, including new canonic groups. It has reached us in numerous editions similar to, or significantly different from, each other in structure and content.

This article gives a general outline of yet unstudied evidences by the Armenian authors Hovhan Imastaser Odznets‘i (717-728), Mkhit‘ar Gosh (1120?-1213), and Hakob Amasiats‘i (18th-19th centuries), as well as by scribes in a number of manuscripts: New Julfa (Nor Jugha), 131 (1098), MM 7615 (1352), 659 (1368), 658 (1601), 837 (1627-1630) etc. It discusses their perceptions about the formation, further development, the role and significance of the Armenian canonical collection.

In their works, medieval authors and scribes quoted from the Armenian canonical collection, praised it and pointed out the reasons and purposes of its formation and evolution, emphasizing its inseparable connection with other Christian canonical collections.

⁴³ ՄՄ 4403, 283ա:

⁴⁴ ՄՄ 3788, 92բ:

НАРИНЕ ВАРДАНЯН

**АРМЯНСКИЙ КАНОНИЧЕСКИЙ СБОРНИК В ЛИТЕРАТУРНЫХ
ИСТОЧНИКАХ И ПАМЯТНЫХ ЗАПИСЯХ**

Ключевые слова: Армянский канонический сборник, Ован Одзнеци, Мхитар Гош, Акоп Амасиаци, канон, памятная запись, свидетельства.

Армянский сборник церковных канонов формировался поэтапно. Армянская "Книга канонов", составленная в V веке, впоследствии многократно редактировалась и постепенно расширялась благодаря включению в нее новых групп канонов. Она дошла до нас в многочисленных редакциях, схожих или существенно отличающихся друг от друга по структуре и по содержанию.

В данной статье в общих чертах представлены неисследованные по сей день свидетельства армянских авторов (Ован Имастасер Одзнеци (717-128 гг.), Мхитар Гош (1120?-1213 гг.), Акоп Амасиаци (XVIII-XIX вв.) и писцов (Новая Джульфа, № 131 (1098 г.), ММ №№ 7615 (1352 г.), 659 (1368 г.), 658 (1601 г.), 837 (1627-1630 гг.) и т.д.) о формировании и дальнейшем развитии, о роли и значении армянского канонического сборника.

Средневековые авторы и писцы восхваляли армянский канонический сборник, цитировали его, указывали на причины и цели его формирования и расширения, подчеркивали его неразрывную связь с общехристианскими каноническими сборниками.